

ՍԱՐԳՍԾԱՆ ԱՐՏԱԿ

ԹԻՂԱԹՊԱԼԱՍԱՐԻ Ի-Ի Զ. Ա. 1112 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԻՐՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԻ ԵՐԹՈՒՂՈՒ ՃՇԳՐՏՄԱՆ ՇՈՒՐՁ

Ասորեստանի արքա Թիգլաթպալասար I-ի (Ջ.ա.1115-1077 թթ.), գահակալության երրորդ տարում¹, դեպի Նաիրի կատարած արշավանքի երթուղին պատմագիտության վիճաբարույց խնդիրներից է: Հարցը բազմիցս ուսումնասիրվել է, սակայն արտահայտված տեսակետները հակասում են այս արշավանքի մասին պատմող արձանագրության², ինչպես և Թիգլաթպալասար I-ի ու ասորեստանյան այլ սեպագրերի փաստական նյութին:

Թիգլաթպալասարը նշում է, որ անցել է 16 եզոր լեռներ՝ Էլամա, Ամադանա, Էլխիշ, Շերաբելի, Թարխունա, Թիրքախուլի, Կիզրա, Թարխանարե, Էլուլա, Խաշթարայե, Շախիշարա, Ուրբերա, Միլիադդունի, Շուլիանգի, Նուրանաշե, Շեշե, և զետանցել Եփրատը: Այնուհետև Ասորեստանի արքան եիշատակում է Նաիրիի հետևյալ 23 երկրները. Թումմե, Թումուրե, Թուալի, Կիմդարի, Ուզուլա, Ունգամունի, Անդիարե, Պիլակի-նի, Աթուրգինի, Կուլիբարգինի, Շինիբիբինի, Խիմուա, Պայթերի, Ուիրամ, Շուրուրիա, Աբաենի, Ադաենի, Կիրինի, Ալրայա, Ուգինա, Նազաբիա, Աբարսիունի, Դայանենի³:

Արձանագրության վերջում Թիգլաթպալասարը վկայում է, որ միևնույն արշավանքը շարունակել ու զնացել է խանիգալրադյան Սիլիդի (Մալաթիա) քաղաքի բնակչության վրա⁴:

Այս արշավանքին վերաբերող այլ արձանագրություններում՝ Թիգլաթպալասար I-ը գրաված տարածքները նշում է հետևյալ կերպ.

«...Թումմեից մինչև Դայանենի՝ Խիմուա, Պայթերի և Խարխի...»⁵,
«...Բարեյունից մինչև Արևմուտքի Մեծ ծովը և Նաիրի երկրի ծովը...»⁶,
«...Նաիրիի երկիրը՝ Թումմեից մինչև Դայանենի և Վերին ծով...»⁷,
«...Մտորին Ջաբից մինչև Վերին և Արևմուտքի ծովերը...»⁸, «... երկրները՝ Արևմուտքի Մեծ ծովից և Նաիրի ծովի...»: Արշավանքի ժամանակ, Յոնջալում (Մանագլետից 30 կմ արևմուտք) թողած արձանագրությ-

յունումն նշվում է «...Թումնիից մինչև Դայանի,... Խաբխի երկիրը մինչև Մեծ ծովը...»¹⁰ գրավելու մասին:

Ուսումնասիրողները, նույնացնելով Թիզլաթալասար I-ի հիշած Ամադանա¹¹ և Աշշուրնագիրալ II-ի վկայած Ամադանի¹² լեռները, (վերջինները Ղարաջաղաղի կամ Էրզանի

լեռներն են[հմմտ. Մադանի հետ]),¹³ արշավանքի ելակետ նշում են Հայկական Տավրոսի արևմտյան շրջանը (Անձիտ)¹⁴: Այս առումով Թումուրեն նույնացվում է Մալմանասար III-ի Ջ.ա. 845 թ. Ռիբարտու-Դայանի կատարած արշավանքի ընթացքում անցած Թունիրունի լեռնանցքին¹⁵, Թումնեն՝ խեթական աղբյուրներից հայտնի Թումաննային (տեղադրվում է Մալաթիայից հյուսիս-արևմուտք Սվազի, Կայսերիի և Գյուրյունի միջև)¹⁶:

Է.Ֆորրերը, Նաիրիի 23 երկրներից առաջարկելով Պայթերի-Փայտակարան, Աթուրգինի-Դերքսենե, Անդիարե-Անգաֆ, Կուլիքարգինի-Կուլարգենե, Ադանի-Օտենե, Աբարսիունի-Օբորդենի, Թումնե-Թում համադրումները, եզրակացնում է, որ ասորեստանյան բանակը գրավել է Մև ծովից մինչև Կասպից ծովը ընկած ամբողջ տարածությունը¹⁷:

Արշավանքի երթուղու ճիշտ որոշման համար անհրաժեշտ է հիմք ընդունել որոշակիորեն տեղադրվող երկրներն ու լեռները: Այդպիսիք են Խաբխին, Թումնեն և Դայանին (լեռների վերաբերյալ ստորև):

Խաբխին ընդհանրական այն երկիրն է, որն ընկած էր Նպատական լեռների և Կորդվաց լեռների միջև, Մ.Ջաբի, Արևելյան Խաբուրի, Խեզիլի ու Ջերմի վերին հոսանքների ավազանում՝ հյուսիս-արևելքում սահման ունենալով Ադբակի լեռները: Նրա կազմում էին Խիմնե (Նպատական լեռների շրջանում, Այբտրուանքի և նրան հարող տարածքներում)¹⁸, Լուխա-Լուխի (Խիմնեից հյուսիս-արևմուտք, Լևին-սուի և Արևելյան Խաբուրի միջև)¹⁹, Աբիբգի (Ալկի՝ Լուխիից արևմուտք)²⁰, Էլամունի (Ալաման՝ Ջերմի, Արևելյան Խաբուրի, Լևին-սուի ակունքների շրջանում)²¹, Մուզի (Ջուլամները Ջերմի ավազանին կապող լեռնանցքի շրջանում [հմմտ. Միկանիսին կամ Մուկանին])²², Թումնի և այլ երկրներ²³: Այս վերջինը նույն Թումնեն պետք է լինի, երկիր, որ ասորեստանյան աղբյուրներում բազմիցս հիշատակվում է միևնույն իսկ վայրում՝ Կիրորուրիի հարևանությամբ, Մեծ Ջաբի ավազանում²⁴:

Մենք այն նույնացնում ենք ներկայիս Թխում բնակավայրի հետ, որը գտնվում է Ջուլամներից 30 կմ հարավ-արևմուտք, Մ.Ջաբի և նրա աջակողմյա Լևին-սու վտակի անկյունային հատվածում: Աշշուրնագիրալ II-ը (Ջ. ա. 884/3-859 թթ.) իր մի արշավանքի ընթացքում անցել է Թումնեի Մուրրա, Աբուկու, Աբուրա, Աբուրե բնակավայրերով և մտել Կիրորուրի (Կրերք), այնուհետև՝ Ներքին Խաբխի²⁵ (Կրերքից՝ Ավրախ, Կորդվաց լեռներից՝ Ջերմ [Շատախի հատված]): Մուրրան, թերևս, հայոց Սրինգն

է (հմմտ. հայ. «սուրել» բառին)՝ Մ.Ջաբի ձախափնյակում, Արուբեն, հավանաբար, ներկայիս Ավարն է՝ Նեխիլի ավազանում (պատմ. Փ. Ալքակի տարածք): Կրեք-Կիրորին համանուն լեռնանցքի շրջակայքում էր՝ Լևին-սուի ավազանում²⁶: Այսպիսով, ստացվում է, որ Թումնե երկիրը ձգվում էր Թխումից, Մ.Ջաբով, Նեխիլի ավազան. այն խաբխիական երկիր էր:

Դայանենին վաղուց ի վեր նույնացվել է հայոց Տայք աշխարհին²⁷: Ակնհայտ է, որ Թիգլաթպալասար I-ը Մ.Ջաբի ավազանից հասել է Տայք: Ի դեպ, Յոնջալուի արձանագրությունում դա առավել հստակ է վկայված՝ Թումնիից Դայանի, Խաբխիից՝ Մեծ ծով, որը Մև ծովն է²⁸: Նշվում է նույն տարածքը, երկրորդ դեպքում՝ առավել ընդհանրական ձևով՝ Թումնե Խաբխիում էր, Դայանենին՝ Մև ծովի հարավամերձ տարածքում:

Որ Թումնեն այստեղ էր՝ Մ. Ջաբի ավազանում, հաստատվում է Էլամ և Ամադանա լեռների տեղորոշմամբ: Էլամա լեռները պետք է հասկանալ իրանական Էլամի լեռներ, իսկ Էլամը Պարսից ծոցի հյուսիսում էր, այժմյան Խուստանի տարածքում: Պետք է նկատել, որ Զ.ա. XII դարի սկզբից, նվաճումների արդյունքում, Էլամ պետության սահմանները ընդարձակվել էին մինչև Դիալայի ավազանը, Ջագրոսի լեռներից արևելք՝ այսօրվա Իրանի տարածքները. Բաբելոնը ևս հայտնվել էր Էլամի իշխանության ներքո: Մակայն Նաբուգոդոնոսոր I-ին (1146 -1123) արքային հաջողվում է պարտության մատնել Էլամին, իսկ վերջիններիս նկատմամբ հաղթություն է տանում Թիգլաթպալասար I-ը²⁹: Հասկանալի է, որ Էլամա լեռները կարող էին լինել Ջագրոսի որևէ հատվածը, որ գտնվում էին Էլամի տարածքում. այսօրվա Իրանի մարզերից մեկը, որ գտնվում է Իրաքյան սահմանում, կրում է Իլամ անունը³⁰: Թիգլաթպալասարը, հավանաբար, Ջագրոսի այս հատվածն է, որ նշում է, որպես Էլամա լեռներ: Իլամից հյուսիս-արևելք Համադանն է³¹ (Էկրատան): Ամադանա լեռները Ջագրոսի համադանյան հատվածն են: Ստացվում է, որ Թիգլաթպալասարը Իլամ-Էլամա լեռներից, Համադանով, շարժվել է հյուսիս՝ մինչև Մ.Ջաբի վերին ավազան՝ խաբխիական Թումնե: Ահա Ջագրոսի այս հատվածում պետք է փնտրել արձանագրությունում նշված 14 մնացյալ լեռները, որոնք, ի դեպ, հիշատակված են Նաիրիի տարածքից դուրս³²:

Ինչ վերաբերվում է Եփրատի գետանցմանը³³, ապա Թիգլաթպալասարը կարծեք շտապում է՝ այն նշելով լեռներից հետո. լավագույն դեպքում արքան կարող էր անցնել Արածանին՝ ակունքների շրջանում (այս մասին՝ ստորև):

Թումնեից Արածանի հասնելու համար Թիգլաթպալասարը պետք է շարժվեր Կոտուր-Ջագրոսյան լեռներով՝ հյուսիս, ինչպես և վարվել է:

Թումներից հետո հիշատակվող Թումուրեն Պարսկահայքի Տամբեր(Տամբեր) գավառն է, Թուալին՝ Այլին է, որ Տամբերի հարավում էր: Այս երկու գավառները Թումների արևելյան հարևաններն էին և գտնվում էին Այլի-Էլի (Նազլուչայ) գետի ավազանում³⁴: Կինդարին պետք է որ Տամբեր-Թումուրեից հյուսիս գտնվեր, քանզի Ուրգուլան, որ նշվում է հաջորդիվ, մույնական է Մալմաստ-Տարմոն գետի Ջուլա անվան հետ³⁵:

Ուրգուլա-Ջուլային հաջորդում է Ունգամունի հրկիրը, որը Վասպուրականի Անձախի ձոր (Ընձա) գավառն է՝ Կոտորի վերին ավազանում: Ունգամունի-Անձախի ձոր անունը հուշում է, որ Կոտոր գետը կրել է Ունգա-Անձա անունը (հմմտ. հայ. «անձավ, անձուկ» քառերին)³⁶, քանզի «ռառ» քիայնական սեպագրում նշանակում է «գետ»³⁷ (հմմտ. Ալամուն-Էլամունի-Ուլմանիայի հետ, որը երկիր էր ու լեռ Ջերմի, Արևելյան Խաբուրի և Լևին-սուի ակունքների շրջանում³⁸, իսկ Լևին-սուն ուղղակիորեն կրում էր Էլամունիա անունը)³⁹:

Հաջորդ երկիրը Անդիաբենն է. այն, հավանաբար, համապատասխանում է Վասպուրականի Թոմնավան գավառին⁴⁰, քանզի հաջորդ երկիրը, որ նշվում է արձանագրությունում, Պիլակինին է, որ մույնացնում ենք Բերկրիի հետ՝ Վանա լճի հյուսիս-արևելքում, Բանդիմահի (Բերկրի) գետի ավազանում: Պիլակինի-Բերկրի անունը, հավանաբար, հնդեվրոպական **plio*, **polio* արմատից է սերվում, որի ժառանգներից են մաև սանս. *palita*, *palikni* «սպիտակ ալիք», հայ. *ալի* «վռհակ, ալիք, սպիտակ մազ» և այլն⁴¹:

Պիլակինի-Բերկրիից հետո նշվում է Աթուրգինին, որ Թոմդրակ լեռան փեշերին էր՝ համապատասխանելով Վասպուրականի Գառնի գավառին: Երկրանվան առաջին՝ **աթուր*⁴² արմատը նշանակում է «կրակ» (հնդեվրպ. **astu* արմատից. հմմտ. հայ. «աթար» բառի հետ): Թոմդրակը, որ գործող հրաբուխ է, ևս կրում է «գետնափոր փուռ, կրակարան» անունը՝ «թոնիր-թոմդիր» բառից⁴³ (այլ անունը՝ Խորի՝ «արև»): Երկրորդ՝ **զին* արմատը, հավանաբար, կապված է Գնունիների տոհմանվան հետ⁴⁴: Վերջիններիս ժառանգական հայրենիքը ընդգրկում էր Առբերանի գավառը, Ադիովիտ և Արճիշակովիտ գավառների մեծ մասը, որը հայ մատենագրության մեջ երբեմն հիշատակվում է «Գնունյաց գավառ» կամ «Գնունյաց երկիր» անուններով⁴⁵: Հետաքրքրական է, որ Խորենացին նշյալ տոհմանունը ստուգաբանում է «զինիանի» ձևով⁴⁶: «Աթուրգինի», հավանաբար, նշանակել է «կրակազինի» և այսպես են մախնիք բնութագրել Թոմդրակի հրաբխային լավան:

Աթուրգինի-Գառնիից Թիզլաթալասար Ի-ը Գառնիձորի լեռնանցքով (Թափաթիզի) մտել է Կոգովիտ, որը և համապատասխանում է մաիդյան Կուլիքարգինի երկրին (Կուլի>Կոգի⁴⁷ և քարգինի՝ «քարձրավայր» > «նովիտ»):

Թիզլաթալասարի գրաված հաջորդ երկիրը՝ Շինիրիին, Չիրավն է, համանուն դաշտում. «Շինի»-ն (Մին՝ աքաղ. լուսնի աստվածն է) անշվում է «Արածանի» գետանվանը (հնդեվրպ. **arg, *areg*, արմատից՝ «հայլ, ցուլք, լույս», որից են նաև «արծաթ», «արծնել» բառերը)⁴⁸. «Իրի-նի»-ն հայերեն «բերան» բառն է (հմմտ. Առ-բիրան, Տուրու-բերան): Արածանի-Շինիրիին համադրումը ունի իր նմանօրինակը. Ջերմի ձախակողմյա Արգաստ վտակը (հնդեվրպ. **arg*, արմատից) կոչվում է նաև Մինեբեր, որն անվանապես նույնական է Շինիրիին⁴⁹:

Թիզլաթալասարը, հավանաբար, Շինիրիին-Չիրավի դաշտում է, որ կտրել է տվել «ուրումի» ծառերը և գետանցել Արածանին⁵⁰:

Հաջորդ երկիրը Խիմուան է, որ Հ.Կարագյոզյանը ճշմարտապես տեղադրում է Նպատ լեռան շրջակայքում՝ տեղանունը ստուգաբանելով հնդեվրպ. *խիմ*՝ «ձյուն» և *-մուա*՝ «ուժեղ, առատ» իմաստով: «Նպատը» բխում է հունական «նիֆետոսից» («ձյուն»)⁵¹: Նույն անունն էր կրում (Խիմնե-Խիմնու) Սիջաբի ավազանում մի երկիր, որ գտնվում էր հարավային Նպատ (Nipates) լեռների շրջանում: Խեթական աղբյուրներից հայտնի Խիմուա-Խիմուվան չի բացառվում, որ համընկնի Մամիկոնյանների Չյունկերտ ավանին՝ Տարոնի և Պալուկիքի սահմանում⁵²:


Խիմուա -Նպասին հաջորդում է նաիրիան Պայթերի երկիրը, որը, հավանաբար, պետք է համադրել Վանա լճի հյուսիս-արևելյան մասում, Աղի գետի վերին հոսանքում գտնվող Պայ բնակավայրի հետ⁵³:

Հաջորդ երկիրն Ուիրամն է, որը պետք է փնտրել Բերկրի և Ջելան գետերի միջև, քանզի Շուրուրիան Շորերն է՝ Ալադաղի գաղավայրի վրա, Ջելան գետի ակունքների մոտ⁵⁴: Այս Շուրուրիա-Շորերը, հավանաբար, բիայնական արձանագրությունների Շուրեյի երկիրն է: Նկատենք, որ «ուրարտացի Արամուի Արգաշկու թագավորական քաղաքը»⁵⁵, որ Արճեշն է⁵⁶, Ջելանի ստորին ավազանում էր, Վանա լճի ափին: Արձանագրություններում Բիայնայից առաջ հիշատակվող Շուրեյեն սկզբնապես, հավանաբար, Վանի թագավորության կենտրոնական երկիրն էր՝ Արգաշկու մայրաքաղաքով:

Ինչևէ, Շուրուրիա-Շորերից հետո Թիզլաթալասարը մտել է Արահնի, որը գիտական գրականության մեջ նույնացվում է Ապահունիքին⁵⁷: Աշշուրի արքան, փաստորեն, Աղի լեռնանցքով անցել է Մանազկերտի դաշտ:

Աղահնի երկիրը, որ նշվում է հաջորդիվ, պետք է որ Ապահունիքից հյուսիս-արևմուտք գտնվեր, համապատասխանելով Տուրուբերանի Դալար, Դասնավուրգ, Մարդաղի գավառներից որևէ մեկին կամ բոլորին միասին: Նշյալ տեղորոշումը հաստատվում է Կիրինի երկրի դիրքով, որ Կարինն է⁵⁸:

Թիզլաթալասարը Կիրինի-Կարինից հետո հիշատակում է Ալբայա, Ուզինա, Նազաբիա⁵⁹, Աբարսիունի և Դայաննի երկրները:



Արարեսիւնին Այրարատի Բասեան-Բասեն գալառն է: Վերջինս հայ մատենագրութեան մեջ երբեմն համարվում է «Հովիտ մեծ», «Քաջ ընդարձակ հովիտ», «Ընդարձակ դաշտ»⁶¹: «Բասեն» տեղանվանը, սովորաբար, վերագրվում է տեղմացեղային ծագում⁶¹ և կապվում փասիաններ կամ քասիաններ ցեղախմբի հետ, որը հիշատակում է Քսենոփոնը⁶²:

«Արարեսիւնին», որ «Բասեն-Բասեանի» նախնական ձևն է, հավանաբար, կապված է պել*aperasan=պրս.*berasan «ամսանձ» բառի հետ, որից հայերենում ունենք «ապարասան, ապերասան»՝ «ըմբոստ, հանդուգն, խեռ» բառը⁶³: Ստացվում է, որ «Արարեսիւնի-Բասեան» նշանակում է «ըմբոստ, հանդուգն, քաջարի, ամսանձ ժողովուրդի երկիր», և պատահական չէ, որ հայ մատենագրութեան մեջ Բասենը անվանակոչված է «Քաջ ընդարձակ հովիտ»:

Հասկանալի է, որ Այրայա, ՈՒգինա և Նազաբիա երկրները պետք է փնտրել Կարինից Բասեն ընկած հատվածում կամ Կարինի շրջակայքում: Կարինից արևելք, Հասանկալա տանող ճանապարհի աջակողմյան հատվածում կա Ավար անունով բնակավայր⁶⁴, որը Թիզլաթպալասար I-ի Այրայան է: Ավարը գտնվում է Վերին Բասենում, Հասանկալա քաղաքից մոտ 7 կմ հարավ-արևմուտք, Աղբերականց կոչված քարեքեր դաշտում, Ծիրանաց լեռներից 10 կմ հեռավորության վրա⁶⁵: Հետաքրքրական է նաև «Աղբերականց»⁶⁶ անվանումը, որը, թերևս, համապատասխան է «Այրայա-Ավարին»: Ավարը հիշատակում է Ղ. Փարպեցին՝ 5-րդ դարի 80-ական թվականների հայ ազատագրական պատերազմների առնչությամբ⁶⁷: Ավարից հյուսիս-արևելք, Հասանկալայից հետո, կա Գերան անունով բնակավայր՝ տեղակայված Արաքսի ձախսահնյակում⁶⁸: Այս բնակավայրը, հավանաբար, Նաիրյան ՈՒգինան է: Ինչ վերաբերում է Նազաբիային, ապա անհնարին չէ այն համադրել Էրզրումից հարավ-արևելք գտնվող Մասսար բնակավայրին⁶⁹: Նազաբիան կարող է նույնական լինել նաև Ստորին Բասենում գտնվող Ազար (Ազափ, Ազապ)⁷⁰ կամ Էրզրումի մարզի Խորասանի շրջանի Ազանքոյ (Հասանքոյ) բնակավայրերից որևէ մեկի հետ. վերջինը ևս կրում է Ազապ անունը⁷¹:

Նազաբիայից (Մասսար կամ Ազապ) Թիզլաթպալասարը մտել է Արարեսիւնի-Բասեն, անցել Դայանեմի-Տայք ու, հավանաբար, հասել Սև ծովի ափամերձ շրջանը⁷²:

Տայքից Թիզլաթպալասարը վերադարձել է Յոնջալուի, քանզի այստեղ հայտնաբերված արձանագրությունը նա կարող էր թողնել միայն Դայանեմին գրավելուց հետո: Արքան Յոնջալուից, Արածանիի ավազանով, անցել է Մալաթիա:

Ինչ վերաբերվում է Բիբկալեն գետնուղու արձանագրությանը, ապա Թիզլաթպալասարը այն կարող էր թողնել իր այլ արշավանքների ընթացքում: Թունուրե-Թունիբունի նույնականության տեսակետը հավաս-

տի ենք համարում, սակայն գտնում ենք, որ Մալմանասար III-ը, իր կառավարման 15-րդ տարում Տիգրիսի (Ջերմի-Ա.Ս.) ակունքների շրջանից անցել է Տամրեր և այստեղից շարժվել գրեթե նույն երթուղիով, ինչ Թիգլաթպալասար I-ը: Մալմանասարը նշում է, որ հասել է Եփրատի (Արևմտյան Եփրատ-Ա.Ս.) ակունքները, որ Ոսկիանք լեռան լանջերին է. այստեղից նա անցել է Դայանեմի:

Պարզվում է մի կարևոր հանգամանք ևս. «ուրարտացի Արամուի» իշխանության տիրույթը ընկած էր Տանրեր-Մուզունիա (Միկանիս կամ Մուկան)⁷³ գծից մինչև Էրզրում՝ հյուսիսից սահման ունենալով Տայքը:

Այսպիսով, Թիգլաթպալասար I-ի Զ.ա.1112 թվականի նախնական արշավանքի երթուղին լույս է սփռում մինչդիպյալական շրջանի Հայաստանի երկրների հասարակական-տնտեսական կացութաձևի, ռազմաքաղաքական հարաբերությունների, էթնովիճակի խնդիրներին: Նախրյան 23 երկրներն, անվանապես և տարածքային առումով, համընկնում են Մեծ Հայքի Կորճայք, Պարսկահայք, Վասպուրական, Այրարատ, Տուրուբերան, Բարձր Հայք և Տայք աշխարհների՝ վերը համադրված գավառներին, նրանց տարծքում գտնվող լեռներին, գետերին, դաշտերին, բնակավայրերին: Աշխատանքում ներկայացված տեղանունների ստուգաբանությունը փաստում է նախրյան երկրներում հնդեվրոպացի հայերի բնակության մասին. այս մոտեցումները, թերևս, կարիք ունեն առավել լայնածավալ ուսումնասիրության, սակայն ակնհայտ է, որ էթնո-տարածքային հանգամանքը նախրյան երկրների համախմբման ու կենտրոնացված պետության ստեղծման գործընթացում առանցքային դեր է խաղացել:

SARGSYAN ARTAK

ON THE CORRECTION OF THE CAMPAIGN ROUTE OF TIGLATPILESER I AGAINST NAIRI IN 1112 B.C.

(Summary)

Definition of the campaign of Tiglatpileser I against Nairi in 1112 B.C. in many questions till now is solved.

Given article concerns to questions at issue of this route. Author offers the own version of the decision of questions at issue.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Թիգլաթպալասար I-ի գահակալության տարեթվի վերաբերյալ գիտական գրականության մեջ արտահայտվել են տարբեր տեսակետներ. մենք ներկայացվող աշխատանքում հիմք ենք ընդունել Զ. ա. 1115 թվականը և նախրյան

- արշավանքի համար՝ Ջ. Կ. 1112 թվականը (տե՛ս, օր., История древнего мира, 1, Москва, 1989, էջ 207-208):
2. Дьяконов И.М., Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, N2, (АВИИУ), 10 (IV, 43); Հայ ժողովրդի պատմության քրիստոնեական, Երևան, 1981, (ՀԺՊ), էջ 19-20:
 3. АВИИУ, 10 (IV, 43):
 4. Նույն տեղում, 10 (V, 33), ծան. 62:
 5. Նույն տեղում, 11, 12:
 6. Նույն տեղում, 12:
 7. Նույն տեղում, 13:
 8. Նույն տեղում, 15:
 9. Նույն տեղում, 16:
 10. Նույն տեղում 17:
 11. Նույն տեղում, 10 (IV, 43):
 12. Նույն տեղում, 23 (III, 92), ծան. 64; 10, ծան. 46; Меликишвили Г.А., Наир-Урарту, Тбилиси, 1954, (Н-У), էջ 170; Арутюнян Н.В., Биайнили (Урарту), Ереван, 1970, էջ 40, 94; նույնի, Топонимика Урарту, Ереван, 1985, (ТУ), էջ 24-25:
 13. АВИИУ, 23 (ծան. 64); ТУ, էջ 24-25:
 14. Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 60, 88-89; ТУ, էջ 190-191:
 15. АВИИУ, 31; Ղափանցյան Գր., Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 125; Աղոնց Ն., նշվ. աշխ., էջ 60; Н-У, էջ 170; Пиотровский Б.Б., Ванское царство (Урарту), Москва, 1959, էջ 45-46; Арутюнян Н.В., Биайнили, էջ 41; ТУ, էջ 190-191:
 16. ТУ, էջ 188-189: Թումիբունին, սովորաբար, նույնացվում է Անձիտի կիրճերին՝ Բիրկալեն բնական զետեղում կամ Գյոկ-դերեին, որոնք տանում են Արածանիի ավազան. Բիրկալենում պահպանվել է Թիզլաթալասար 1-ի մի արձանագրությունը (АВИИУ, 16):
 17. Աղոնց Ն., նշվ. աշխ., էջ 62 (ծան. 1), 348:
 18. Հ.Մանանդյանը խիմենն նույնացնում է ժամանակակից Թխումին (Ջուլիաներկից 30 կմ հրվ.-արմ.) (Манандян Я. А., О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, Ереван, 1956, էջ 8, 11-12): Առավել ճիշտ ենք համարում Այրտրուանքում մրա գտնվելու տեսակետը (Հայ ժողովրդի պատմություն, հ.1, ԳԱ հրատ., Երևան, 1971, (ՀԺՊ), էջ 280 (ծան.2): Այս ամենի մասին տես ստորև:
 19. Լուխա (Լախի) – Խալզիլուխա (Ամիդից հրվ.-արլ.) համադրումն անընդունելի է (ТУ, էջ 130): Մալմանասար I-ի (АВИИУ, 2) և Թիզլաթալասար 1-ի (АВИИУ, 10[IV, 7]) հիշատակությունների համեմատական վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ Լուխա-Լուխին Մ.Ջարի ավազանում էր (հմմտ., նաև, խաբխիական Լուս բնակավայրի հետ [АВИИУ, 14]):
 20. Манандян Я.А., նշվ. աշխ., էջ 12:
 21. Նույն տեղում, էջ 12, (հմմտ., նաև, քարտեզ «Վանի վիլայեթ», Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 11, Երևան, 1985, (ՀՍՀ), էջ 275:
 22. Манандян Я.А., նշվ. աշխ., էջ 10, ծան.2:

23. ТУ, էջ 217-218:
24. Թումանյանի տեղադրությունը գիտական շրջանակներում վիճահարույց խնդիր է. Ն.Վ.Հարությունյանը, օրինակ, այն կարծիքին է, որ գոյություն են ունեցել Թումանյան անունով 2 տարբեր երկրներ (ТУ, էջ 188-189): Ն.Ադունցը այս երկիրը տեղադրում է Յոնջալուի դաշտում (Ադունց Ն., նշվ. աշխ., էջ 61), Գ.Ա.Մելիքիշվիլին, Թումանյան տեղադրելով Ուրմիա լճից հարավ, չի բացառում մահ Վանա լճից հյուսիս մույնանում մեկ այլ երկրի գոյության հանգամանքը (Н-У, էջ 173): Մենք համակարծիք ենք Ի.Դիակոնովի հետ. չի կարելի այս արշավանքի ընթացքում հիշատակվող Թումանյան տարբերակել ասուր. այլ արձանագրություններից հայտնի մույնանում երկրից. այն Մ.Ջաբի ավազանում էր, Կիրրուրի հարևանությամբ (АВИИУ, 10[ծան. 51], 17[ծան.2], 23, ծան.3): Այս մասին տե՛ս ստորև:
25. АВИИУ, 23 (I, 43; I, 54; I, 56; I, 58):
26. ТУ, էջ 111-112:
27. Меликишвили Г.А., Диареи, ВДИ, 1950, 4, էջ 26-42; АВИИУ, 10, (ծան.45), 27(ծան.13); Пиотровский Б.В., նշվ. աշխ., էջ 31; Арутюнян Н.В., Биайнили, էջ 13, 400; ТУ, էջ 70-71:
28. АВИИУ, 10 (ծան. 45):
29. Всемирная история, т. I, Москва, 1955, էջ 302-303:
30. ՀՄՀ, հ.4, Ե., 1978, էջ 440, քարտեզ՝ «Իրան»:
31. Նույն տեղում:
32. АВИИУ, 10 (IV, 43):
33. Նույն տեղում:
34. Տես օր., ՀՄՀ, հ.9, Ե., 1983, էջ 209, քարտեզ՝ «Պարսկահայք մահանգը և Նոր Շիրական բղեշխությունը»:
35. Ուրմիա է թափվում լճի հյուսիս-արևմտյան հատվածում:
36. Աճառյան Հր., Հայերեն արձատական քառարան, հ.1, Երևան, 1971, (ՀԱԲ), էջ 202, 204:
37. Меликишвили Г.А., Урартоведческие заметки, ВДИ, 1951, N 3, էջ 174-176:
38. Манандян Я.А., նշվ. աշխ., էջ 12:
39. Գիտական շրջանակներում ընդունված է այն տեսակետը, որ Էլամունիան Մ.Ջաբի վերին հոսանքի հնագույն անվանումն է, սակայն առավել հավանական ենք համարում Մ.Ջաբի աջակողմյա Լևին-սու վտակի հետ մրա մույնականությունը, քանզի այս գետն է, որ սկիզբ է առնում Էլամունի-Ալամունի շրջակայքից:
40. Հնարավոր է, որ Անդիարեն, ինչպես և Թոռնավանը, նշանակեն «ջրային, անձրևոտ երկիր» (հմմտ. անդի>անձի>անձրև և թոռն>թոռ՝ «անձրև», արե>ավե>ավան):
41. ՀԱԲ, հ.1, էջ 93-94:
42. Ատր<պել. տր նշանակում է «կրակ» (հմմտ. Ատրուշան՝ «կրակալաշտների կրակարան») (ՀԱԲ, հ.1, էջ 290-291):
43. ՀԱԲ, հ.II, Ե., 1973, էջ 196:

44. Գառնի գավառանվան և այստեղ գտնվող Գուրն լեռան ու նրա ստորոտի Գիրասուր բնակավայրի, նաև Բայազետ գետի Գերմնիկ անունները ևս, հնարավոր է, որ առնչվեն **գի(ր)նի*-ին:
45. ՀՄՀ, հ.3, Ե., 1977, էջ 141:
46. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990, էջ 71:
47. Հնարավոր է նաև, որ «Կուլը» ունենա հայերեն «Կյուլ-Գայլ» իմաստը և Կո-գովիտի Գայլատու լինել պահպանած լինի այդ անունը:
48. ՀԱԲ, հ.1, էջ 317-318, 319:
49. Հավանական է նաև Շինի>Սինի>Չի և բիրինի>բիր>բար>բավ անցումները, որտեղից՝ Շինիբիրինի>Չիրավ: Հետաքրքրական է, որ Չիրավի և Ալաշ-կերտի դաշտերը իրարից բաժանող լեռնագագաթը կրում է Սինակ անունը:
50. АВИИУ, 10 (IV, 43):
51. Կարագեոզեան Հ., Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, I, 1, Երևան 1998, էջ 257-258:
52. Չյունկերտի տեղադրության վերաբերյալ տե՛ս Աղոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1989, էջ 28-29:
53. «Վանի վիլայեթ» քարտեզ, ՀՄՀ, հ.11, էջ 275:
54. Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 61:
55. АВИИУ, 27 (II, 45):
56. Արգաշկուն նույնացվում է նաև Արծկեի և Մանազկերաի հետ, սակայն առավել հավանականն ու ճշմարտացի Արգաշկու-Արճեշ նույնականությունն է քվում (այս ամենի վերաբերյալ տե՛ս, օր., Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 85; Арутюнян Н.В., Бияйнили, էջ 107-108; ТУ, էջ 34-35; Карагезян О.О., Локализация урартского царского города Арцашкы, «Լրաբեր հասարակական գիտությունների», ԳԱ ՀՄՀ, 1976, N5, էջ 67-98:
57. Халатьянц Г.А., О некоторых географических названиях древней Армении в связи с данными ванских надписей, (ՀՀ Ազգային գրադարանի 417 (47.925)դ-17 համարի տակ): Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, (ՀՀՇՏԲ), հ.1, Երևան, 1986, էջ 1: «Արաենի-Ապահունիք» տեղանունը, հավանաբար, կապված է պահլավերեն *ap*՝ «ջուր» բառի հետ, որից հայերենում ունենք «Ապարահը»՝ «տեղատեղ, ամսական հոսում ունեցող» իմաստով: Արաենի-Ապահունիքը գտնվում էր Արածանիի ավազանում և, հավանական է, երկրանունը ստուգաբանել «Ջրային երկիր» իմաստով:
58. ТУ, էջ 111: «Կիրինի-Կարինը», հավանաբար, կապված է Հայաստանի Կարանիս(Ք.ա. XIVդ.) թագավորի անվան հետ (Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 35): Տեսակետը ճշմարտանման է, քանզի Հայաստան ընդգրկում էր Բարձր Հայքի և Փոքր Հայքի տարածքները: Բացի այդ, Հայաստանի արքաներից մեկն էլ կրում էր Անիաս անունը, որն համադրելի է Դարանադյաց Անի ամրոցի անվանը: Այսինքն, ակնհայտ է, որ Հայաստանի թագավորների անուններով բնակավայրեր են անվանակոչվել: «Կիրինի» անվանումը հայաստական՝ հայկական միջավայրի ծնունդ է: Դա խոսում է մի կարևոր հանգամանքի մասին ևս. Ք.ա. XII դարում Հայաստանի տարածքը ասորեստանցիների կողմից ընկալվում էր, որպես Նաիրի երկիր:

59. Ն. Ադոնցը Թիգլաթպալասար 1-ի հիշած Նաիրիի Նազարիա, Ամդիարի և Շուրուրիա երկրները նույնացնում է Պևինգիդյան աղյուսակի Նասարիա, Ամտարի, Սորոտ կայաններին, որ ընկած էին Շումրից Բագավան հատվածում (Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 60-61): Հ.Սանանդյանը մերժում է սույն նույնացումներն ու տեղադրությունները (Манандян Я. А., նշվ. աշխ., էջ 22-23): Այնուամենայնիվ, հետաքրքիր են համադրությունները. հնարավոր է, որ Խումբո, Նասարիա, Ամտարի, Սորոտ հերթականությամբ հիշատակվող կայանները ցուցանեն Շումրից տարբեր ուղղություններով գնացող ճամապարհները:
60. ՀՀՏԲ, հ. 1, էջ 610: ՀՄՀ, հ.2, էջ 301:
61. ՀՄՀ, հ.2, էջ 301:
62. Նույն տեղում:
63. ՀԱԲ, հ. 1, էջ 231: Այս ստուգաբանությունն ընդունելու դեպքում հայերեն «ապարասան, ապերասան» բառի պահլավերենից փոխառյալ լինելու տեսակետը պետք է կասկածի ենթարկել և առավել հավանական համարել պահլավերենում և հայերենում այդ բառերի՝ հնդեվրոպական ընդհանրական լեզվից անցած լինելու տարբերակը:
64. ՀՀՏԲ, հ. 2, քարտեզ «Էրզրումի գավառ(Էրզրումի մահանգ)»:
65. ՀՀՏԲ, հ. 1, էջ 102:
66. Այս դաշտը կրում է մաս Ադրերականք, Ադրիականաք, Արծաթադրերան, Արծաթադրերս, Արծաթադրյուր: Այն առաջին անգամ հիշատակում է Ղ.Փարպեցին, ըստ որի դաշտի հիմնական անունը Արծաթադրերս էր: Այստեղ էր գտնվում պատմական Դու գյուղը (ՀՀՏԲ, հ. 1, էջ 162; Ղ. Փարպեցի, Հայոց պատմություն, Ե., 1982, էջ 354, 355):
67. Ղ. Փարպեցի, Հայոց պատմություն, էջ 374, 375: Ալվարի մասին մի քանի հիշատակություններ կան մաև 14-18-րդ դարերում: Հետազայուն Ալվարը մտնում է Էրզրումի մահանգի համանուն գավառի Բասենք գավառակի մեջ:
68. ՀՀՏԲ, հ. 2, քարտեզ «Էրզրումի գավառ(Էրզրումի մահանգ)»: մաև էջ 850: Այստեղ է գտնվում Գերան դաշտը:
69. ՀՀՏԲ, հ. 2, քարտեզ «Էրզրումի գավառ(Էրզրումի մահանգ)»;
70. ՀՄՀ, հ. 2, էջ 302; ՀՀՏԲ, հ. 1, էջ 38:
71. ՀՀՏԲ, հ. 1, էջ 38:
72. АВНУ, 10 (ծառ. 45):
73. Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 79-80; Манандян Я.А., նշվ. աշխ., էջ 10, ծառ.2: